

2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրությանը, նոր տեսակի Կորոնավիրուսի համաճարակի տարածմամբ պայմանավորված իրավիճակին, առկա անորոշություններին, քառասունչորսօրյա պատերազմին և դրանով պայմանավորված հայտարարված ռազմական դրությանը, Բանկը հաշվետու ժամանակաշրջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը և ապահովել է նույնիսկ ֆինանսական որոշ ցուցանիշների աճ՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ համեմատ: Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Անդրադառնալով բանկերի հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2020 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների որոշակի աճ: Մասնավորապես,

- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 7 մլրդ դրամով կամ 2.1%-ով և կազմել 332 մլրդ դրամ:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է 238 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 7.3 մլրդ դրամով (3.2%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 69%-ը, որից,

- Անհատական վարկային պորտֆելը նվազել է 1.6 մլրդ դրամով (1.5%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը աճել է 8.9 մլրդ դրամով (7.5%-ով)


ԲԱՆԿԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2020Թ.ՎԵՐՋԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ



• Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 2.7 մլրդ դրամով կամ 1%-ով և կազմել 284 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:


2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



✓ Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածը ավելացել է 5.8 մլրդ դրամով (2.6%-ով) և կազմել ընդհանուր պարտավորությունների 80%-ը:


ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱԲ, ՄԼՆ ԴՐԱՄ



• Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 4.1 մլրդ դրամով կամ 9.2%-ով և կազմել 48.3 մլրդ դրամ:

2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




- 2020թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում եղել են ՀՀ ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- Տարվա զուտ շահույթը կազմել է մոտ 2.8 մլրդ դրամ: Այն նախորդ տարվա համեմատ նվազել է 49%-ով:

ՉՈՒՏ ԾԱՅՈՒՅԹԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Գործառնական շահույթը կազմել է մոտ 9.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 1.3 մլրդ դրամով կամ 15.4%-ով:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Տոկոսային եկամուտները կազմել են 25.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 6.3%-ով:
- Տոկոսային ծախսերը կազմել են 11.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 3.9%-ով:

ՏՈԿՈՍԱԿՑԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ , ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




- Չուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 14 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 8.3%-ով:

2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 5.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 2.8%-ով:
- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են 9.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.3%-ով:

ՈՉ ՏՈԿՈՍԱԿԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ Դ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Չուտ ոչ տոկոսային եկամուտը կազմել է -4.6 մլրդ դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր -4.8 մլրդ դրամ:
- Չուտ մասհանումները կազմել են 6.1 մլրդ դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր 1.2 մլրդ դրամ:
- Ծախս / Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 50.6%՝ նախորդ տարվա 55.0% ցուցանիշի դիմաց:

2020թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ռիսկերի կառավարումը

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Խորհրդի նախագահ՝

Արմեն Տեր-Տաճատյան

Խորհրդի անդամ՝

Խուան Կարլոս Օսկոիդի